

ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաները՝ նորարարական տեխնոլոգիաներ են, որոնց ներդրումը էապես փոխում է մարդու տարբեր տեսակի գործունեության բովանդակությունը: Նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների մեջ առանձնանում են բազային ինֆորմացիոն տեխնոլոգիաներ՝ գիտական և ինժեներական գիտելիքների համակարգ, ինչպես նաև ինֆորմացիայի ստեղծման, հավաքման, պահպանման և մշակման համար օգտագործվող մեթոդներ և միջոցներ, անկախ այն առարկայական ոլորտից, որտեղ ստեղծվում և օգտագործվում է տվյալ ինֆորմացիան (սահմանումը բերված է «Ինֆորմացիոն տեխնոլոգիաները բարձրագույն դպրոցում: Տերմիններ և սահմանումներ» Ռ-Դ Բուհական Պետական կոմիտեի մասնաճյուղային ստանդարտից): Երբեմն օգտագործվում է նաև «ավտոմատացված ինֆորմացիոն տեխնոլոգիաներ» (computer-aided information technology)՝ որոնցում տվյալների ստեղծման, հավաքման, պահպանման և մշակման համար օգտագործվում են հաշվողական տեխնիկայի և կապի մեթոդները և միջոցները (տե՛ս Р. Потапова, Новые информационные технологии и лингвистика, Москва, 2004, էջ 208):

Ինֆորմացիոն հասարակության հիմքում ընկած *ինֆորմացիոն և հաղորդակցական տեխնոլոգիաները*, որոնք կազմում են տնտեսության ամենաարագ զարգացող հատվածը և մեր ժամանակի առավել էական ինֆրակառուցվածքը, օգտագործվում են ամենուրեք: Չկան արտադրության, գիտության, կրթության, սպասարկման, առևտրի, պետական ղեկավարման բնագավառներ, ուր ինֆորմացիոն և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը շահութաբեր չլինի, ինչը արտահայտվում է արտադրողականության, արդյունավետության, հուսալիության, անվտանգության բարձրացմամբ, ինչպես նաև արժեքի և ժամանակի խնայողությամբ: Ինֆորմացիոն տեխնոլոգիաները վերափոխում են տնտեսական կառուցվածքները և նպաստում են հանրությունների, երկրների, տարածաշրջանների *ինտելեկտուալ և մրցակցային մեթոդի* հետագա զարգացմանը:

Նոր տեխնիկական իրականությունը ազդում է տնտեսական քաղաքականության, սոցիալական ինստիտուտների զարգացման վրա՝ արդյունքում հանգեցնելով սոցիալական և տնտեսական զգալի փոփոխությունների և գոյության նոր տեխնոլոգիական միջավայրի ձևավորման:

Հայաստանի՝ նյութական սահմանափակ ռեսուրսներ ունեցող երկրի համար ինֆորմացիոն հասարակության ձևավորումը զարգացման միակ ընտրությունն է, որը կապահովի երկրի վերափոխումը համաշխարհային տնտեսու-

թյան մեջ ինտեգրված, բազմագործառութային կառուցվածքի և կնպաստի սոցիալական ու արտադրական գործունեության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը: Այդ ամենի համար անհրաժեշտ ինֆորմացիոն տեխնոլոգիական գրագիտությունը, կրթությունը և վարժեցումը հայ հասարակության առաջնահերթ խնդիրներից են:

Ինֆորմացիոն հասարակության գործունեությունը ապահովվում է հեռահաղորդակցական միջոցներով և ինֆորմացիայի մշակման և ձևափոխման համակարգերով: Հեռահաղորդակցական միջոցները, օգտագործելով **էլեկտրոնային Փոստը**, հնարավորություն են ընձեռում գործնականում ակնբարբորեն ինֆորմացիա փոխանակել աշխարհի ամենատարբեր կետերում գտնվող կոմպյուտերների* միջև ինչպես կազմակերպության, քաղաքի, շրջանի սահմաններում, այնպես էլ հարյուրավոր և հազարավոր կիլոմետր հեռավորության վրա: **Internet** համակարգը հնարավորություն է տալիս դիմել գրեթե անսահման ինֆորմացիայի աղբյուրներին՝ ինչպես տվյալներ ընթերցելու, այնպես էլ սեփական ինֆորմացիա հրատարակելու նպատակներով:

Ժամանակակից համակարգիչները ձեռք են բերում **մուլտիմեդիական հասկություններ**, որոնք թվային ինֆորմացիան ձևափոխում են գրաֆիկական, ձայնային, շարժանկարային տեսքի՝ ապահովելով օգտագործողի համար բարյացակամ համագործակցություն և հարմարավետ աշխատանքային միջավայր:

Ինֆորմացիոն պաշարներ

Ինֆորմացիոն պաշարը ինֆորմացիոն հասարակության ելակետային հասկացություններից է, որը ենթադրում է սոցիալական օգտագործման համար պատրաստված և նյութական կրիչների վրա ամրագրված գիտելիքներ և տվյալներ՝ ներկայացված փաստաթղթերի, կոմպյուտերային ծրագրերի, ինչպես նաև արվեստի գործերի, գրականության, գիտության ձևով: Ինֆորմացիոն պաշարների մեջ յուրահատուկ տեղ են զբաղեցնում համակարգիչների մեջ պահպանվող տվյալների հավաքածուները՝ **Տվյալների շտեմարանները** և **Տվյալների հենքերը** (այդ թվում նաև լեզվաբանական տվյալների շտեմարաններ և հենքեր), որոնց միջոցով հնարավոր է նոր տվյալների ձևավորում և ինֆորմացիոն ծառայությունների մատուցում:

Ինֆորմացիոն պաշարներին դիմելու առաջատար տեխնոլոգիան **Internet ցանցային տեխնոլոգիան է**, որը միավորում է տարաբնույթ հանրություն՝ պետական հաստատություններ, համալսարաններ, առևտրային, արտադրական, հասարակական և այլ կազմակերպություններ, ինչպես նաև առանձին անհատներ, և ապահովում է ողջ աշխարհի ինֆորմացիոն պաշարներին և տվյալների հենքերին դիմելու հնարավորություն: Internet-ը հիմնականում ապահովում է

*Գրքում կիրառվող կոմպյուտեր և համակարգիչ գուգահեռ ձևերից Հայերենի բարձրագույն խորհրդի կողմից վավերացված է **կոմպյուտեր** ձևը, իսկ շրջանառվող **համակարգիչ** ձևը տակավին ՀԲԽ-ի կողմից վավերացում չի ստացել:

գործունեության երեք բնագավառ. հաղորդակցական և ֆայլերի փոխանակման համար օգտագործվող **էլեկտրոնային փոստը**, **World Wide Web** կամ **WWW** (Համաշխարհային Ոստայն)՝ ինֆորմացիայի հրապարակման համար, և, վերջապես, **Usenet** համակարգը՝ բանավեճային խմբերի և ինֆորմացիայի բաշխման և տարածման համար:

Երկրի, տարածաշրջանի, կազմակերպության ինֆորմացիոն ռեսուրսների, ինտելեկտուալ ներուժի հետագա զարգացումը ստանում են ստրատեգիական բնույթ, որն իր կարևորությամբ համարժեք է կամ էլ հաճախ գերազանցում է հումքի և էներգիայի պաշարները: Ինֆորմացիոն պաշարների քանակը, որակը և մատչելիությունը մեծապես բնորոշում են երկրի զարգացման մակարդակը և կարգավիճակը համաշխարհային հանրության մեջ (հմտ. Բ. Ջանփոլադյան «Կոմպյուտերային կիրառական տեխնոլոգիաների հիմունքներ», Երևան, 2000թ.):

Գրականություն

Потапова Р. К., Новые информфционные технологии и лингвистика, Москва, 2004

Ջանփոլադյան Բ., «Կոմպյուտերային կիրառական տեխնոլոգիաների հիմունքներ», Երևան, 2000թ.